

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պարմական գիտությունների դոկտոր

«ՊԱՏՃԷՆ ՏՈՒՄԱՐԻ» (Է-ԺԵ ԴԱՐԵՐ)

ՊԱՐՏԱՎՈՐԵՅՆՈՂ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Տոմարական հաշվարկումների կարևորությունը հայագիտության համար վաղուց համընդհանուր ճանաչում ունեցող իրողություն է, ուստի պատմաբան-բանասեր առանձին հեղինակություններ երկար ժամանակ հարկադրված էին թողնել իրենց բուն աշխատանքը և զբաղվել ժամանակագրելու հետ կապված խնդիրների քննությամբ: Նման առիթով են գրվել Հ. Մկրտիչ Ավգերյանի, Հ. Ղևոնդ Ալիշանի, ակադ. Հովսեփ Օրբելու, Լևոն Խաչիկյանի, պրոֆ. Ա. Աբրահամյանի և այլոց տոմարագիտական արծարծումները: Ժամանակագրելու համար քիչ կարողություն չի ծախսել «Ազգապատումի» հանրաճանաչ հեղինակ Մաղաքիա արքեպս. Օրմանյանը:

Տասնամյակներ առաջ տոմարագիտության հարցերը գործնականության հիմքի վրա դրվեցին՝ ունենալով համապատասխանության աղյուսակներ կազմելով (Հ. Բաղայան, Բ. Թումանյան, Ա. Աբրահամյան), ունենալով հայսմավորքային ու ծիսական հին ու մոր տոներ համաձայնեցնելով (գերազանցապես եկեղեցական աստիճանավոր սպասավորներ): Սակայն կար մի մատենագրական բնագավառ՝ տոմարական բնագրերի գիտական հրատարակություն, որին անդամագրվելու կամ ավելի ստույգ՝ որի լծի տակ մտնելու համար աստղագետ-տոմարագետի և պատմաբան-բանասերի կրկնավորած պատրաստություն պետք էր ունենալ: Եվ ահա, հանգամանքների բերումով, հայագիտության մոր դպրոցի ուսուցչապետերից Լ. Խաչիկյանի տեսադաշտում հայտնվեց աստղաֆիզիկայի պատրաստություն ունեցող և բնագրագիտությանը հմտանալու պատրաստակամ տիկին Զուլիետ Էյմաթյանը:

Հայագիտական-տոմարագիտական ժառանգությանը մասնագիտորեն ծանոթանալուց հետո, մոյմ Լ. Խաչիկյանի խնամածու վերադիտության պարագաներում, մա ձեռնամուխ եղավ XIV-XV դարերի սահմանագծում ապրած ու գործած Հակոբ Ղրիմեցու տոմարագիտական հինգ աշխատությունների համեմատական բնագրերի հրապարակմանը (գիրքը լույս է տեսել Երևանում 1987 թ.): Հետաքրքիր է արձանագրել, որ այդ բնագրերից մի քանիսը Ղրիմեցին մախապես իբրև դասընթաց կարդացել է Երզնկայի ու Մեծոփի դպրոցներում, ապա գրառել իբրև միջնադարյան ձեռնարկ: Աշխատասիրողը չի գոհացել սույն բնագիրը ընթերցանելով և ծավալուն պրպտումներ է կատարել Ղրիմեցու գործածած աղբյուրները պարզելու և ըստ այնմ հեղինակային արծարծումները գնահատելու համար:

Ուստի Ջ. Էյնաթյանի ներածությունը (123 էջ) տոմարագիտության պատմության մի տեսակի համառոտում է, բնագավառին հմտանալու ուսանելի ընթացք:

Տասնամյակներ առաջ 17-18-րդ դարերի հայ բնագիտական միտքն ուրվագծելիս Լ. Խաչիկյանն ափսոսանք էր հայտնում, որ Հ. Ղրիմեցու կրտսեր ժամանակակից Եսայի Ղրիմեցու աշխատությունները մասնագիտական ուշադրության չեն արժանացել: Հակոբ Ղրիմեցու բնագրագիտական ու հաշվարկային դժվարությունները հաջողությամբ հաղթահարած Ջ. Էյնաթյանը երկմտելու առիթ չունեմ, թե հաջորդ գործը Ե. Ղրիմեցու «Տոմար արեգական և լուսնի» խորագրի տակ հավաքված աղյուսակների մեկնաբանյալ հրատարակությունը պիտի լինի (այն լույս տեսավ 1990 թ.):

Այս ամենը, կարելի է ասել, մի տեսակ մասնագիտական մախապատրաստություն էր՝ ծավալով ու հարցերի ընդգրկումով շատ ավելի բարդություններ ունեցող «Պատճեն տոմարի» խորագրով պահպանված միջնադարյան բնագրի գիտական հրատարակության և քննության համար, այս անգամ արդեն մեր մոր սերնդի միջնադարագետներից իր ստուգադրելու հմտությամբ ու մասնագիտական-կատարողական պահանջկոտությամբ հայագիտական շրջաններին հայտնի Գեորգ Տեր-Վարդանյանի աշխատակցությամբ ու խմբագրությամբ:

«Պատճեն տոմարի» երկը փաստորեն ամփոփում է միջնադարյան աստղագիտության արմատական խնդրի՝ ժամանակագրության կարգավորման ձեռքբերումները, կողք կողքի ներկայացնելով տարբեր ժողովուրդների ու մատենագրությունների օրացուցային իմացությունները:

Այս բնագիրը դրված է եղել հայկական տոմարական մեկնությունների հիմքում, ուստի նրա գիտական ուսումնասիրությունը, աղբյուրագիտական հետաքրքրությունից բացի, խիստ գործնական-կիրառական նշանակություն ունի, մանավանդ որ մեր վաճառական դարոցների համար հիմնական ձեռնարկ է ծառայել. ձեռագրական համեմատությունների ճանապարհով աշխատասիրողները պարզել են, որ «Պատճեն»-ները միմյանցից տարբերվում են ոչ միայն ծավալով, այլև ճշգրիտ սահմանումների շարադրանքով:

«Եվ քանի որ դրանից մաթեմատիկական հաշվումների էությունը չի փոխվում, ուստի ընտրեցինք և անհրաժեշտ ներածությամբ օժտելով այստեղ հրատարակում ենք Հովհաննես Սարկավազի և Հակոբ Ղրիմեցու խմբագրած տարբերակների հնագույն, ընդարձակ և ամբողջական մեկական օրինակ, որոնց հիմնական միջուկը Անանիա Օրբակացու պատրաստած «Պատճեն տոմարին»-ն է: Առանձին ներկայացրել ենք նաև «Տոմար արքայական» փոքրիկ աշխատությունը, որ առկա է «Պատճեն»-ի ոչ բոլոր օրինակներում» (էջ 8):

Ընդարձակ «Ներածությունը» (էջ 10-139) այլ կերպ կարելի է խորագրել «Տոմարագիտական գիտելիքների պատմություն»: Բնականաբար այդ ընդգրկումը մպատակ ունի պարզելու հայոց օրացուցային, աստղագիտական և մաթեմատիկական գիտելիքների առնչությունը Հին աշխարհի և միջնադարի քաղաքակրթություններին՝ ընդհանրություններն ու տարբերությունները բացահայտելու հավասար ձգտումով: Չէի սափ, թե այս դրվագում այլ մասնագիտությունների ներկայացուցիչներին կատարելիք չի մնացել. պարսից, վրաց, աղվանից և մի քանի այլ մատենագրություններում գործածություն գտած տոմարական համակարգերի, եզրերի, ամսանունների ու օրանունների ստույգ գրությունը

ճշտելու, գործածության շրջանակները որոշելու, մշակութային միջավայրը և անցումները սահմանելու համար հրապարակվող բնագրերում ծով գյուղ կա: Առհասարակ աստղագիտական-տոմարական բնագրերը կարող են անսպասելի աղբյուրագիտական գյուղ ընձեռել հայագետ-արևելագետին: Այդ առումով, օրինակ, բացառիկ արժեք ու հետաքրքրություն է ներկայացնում բաբելական սեպագրով գրված սելևկյան աստղագիտական այն օրագրությունը, որի հաղորդման հիման վրա Տիգրան Երկրորդի ժամանակների հետ կապված դիմաստիական ճշգրտում կատարեց հանգուցյալ ակադ. Գագիկ Սարգսյանը (տես ՊԲՀ, 1991, N 2): Ուրեմն՝ կարևոր է ոչ միայն հայերենով պահպանված տոմարական բնագրերի քննությունն ու հրատարակությունը, այլև օտար աղբյուրներում եղած հայագիտական հետաքրքրություն ներկայացնող հաղորդումների պրպտումը:

Ուրախությամբ պիտի արձանագրել, որ աշխատասիրողները պատշաճ ուշադրություն և հետևողական բնագրագիտական սկզբունք են ցուցաբերել հրատարակվող ու նաև չհրատարակվող ձեռագրերի նկարագրության հանդեպ, ստուգել ու սրբագրել են գրչական և հնչյական հիմքի վրա կատարված աղավաղումները, ի նորո հաշվարկել բազմաթիվ թվական միավորներ (կողքին ճշելով ստույգը՝ փակագծված), կազմել օգտագործած աղբյուրների ու գրականության (ձեռագիր կամ տպագիր) պատկանելի մատենագիտություն (ԻԸ+116): Դասական մատենագիտական աշխատանքների օրինակով նրանք չեն զոհացել «Բովանդակության» ավանդական թվարկումով և գիրքը օժտել են «Հրատարակվող բնագրերի վերնագրերի և ենթավերնագրերի» ցանկով (էջ 98-119), որը մեծապես դյուրացնում է պահանջվող գյուղի որոնումը:

Ամփոփելուց առաջ վերստին հիշենք, որ Ծիրակացու ստեղծած «Պատճեն տոմարի» աշխատությունը ձեռագրերում առանձին չի պահպանվել, ուստի հրատարակիչներն այն ներկայացրել են Սարկավազի խմբագրած և հարստացրած օրինակով, ըստ 1999 ձեռագրի՝ խուսափելով այլ ձեռագրերից լրացումներ կատարելուց: Եվ ապա՝ «Ջ. Էյնաթյանը օժանդակ գյուղերով և տոմարական հաշվումներով ստուգել է ԾԼԲ [532] ամաց աղյուսակի բոլոր տվյալները [թվական, վերադիր, յոթնորեակ, տանուտեր, հայտնություն, առաջավորաց, քանիք, բուն բարեկենդան, միջոց] և պարզել, որ այստեղ կան երբեմն ամսանունների, առավել շատ թվատառերի գրչական վրիպակներ, որոնց մի մասը օրինաչափ և հատկանշական են մեր գրչության... համար» (էջ 97):

«Պատճեն տոմարի» գրքի հրատարակությունը Ջուլիետ Էյնաթյանի աշխատասիրությամբ և Գեորգ Տեր-Վարդանյանի աշխատակցությամբ և խմբագրությամբ, մատնացուցելի գիտական բարեխղճությունից բացի՝ երկու հմուտ մասնագետների համատեղ գործելու մեզանում հազվադեպ կատարվող շնորհակալ աշխատանք է: